ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-7-1-Ա

ք. Երևան 01.10.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի հոկտեմբերի 1-ի նիստում քննարկեց 2025 թվականի հունվարի 7-ին արտոնագրային հավատարմատար Հռիփսիմե Պապիկյանի կողմից ներկայացված՝ «Առատաշեն վայների» ՍՊԸ ընկերության (ՀՀ, Արմավիր, Առատաշեն, Կոմիտաս 1/3, AM) «ARATASHEN WINERY» (No20232918) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 33-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «Առատաշեն Aratashen Арагашен» (Վարդգես Վարդանյան Լենդրուշի ՀՀ, Երևան, Վերին Անտառային 122 AM, N 32792, 11.06.2021թ.) բառային ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 122-րդ կետի, 130-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում համեմատվող համակցված և բառային նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, այն է՝ գրանցված բառային ապրանքային նշանի մաս կազմող «Aratashen» բառն ամբողջությամբ ներառված է հայտարկված նշանի մեջ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական

փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 33-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «Առատաշեն Aratashen Арагашен» (Վարդգես Վարդանյան Լենդրուշի ՀՀ, Երևան, Վերին Անտառային 122 AM, N 32792, 11.06.2021թ.) բառային ապրանքային նշանին:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է:

Բողոքարկողի ներկայացուցիչը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 26-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Հռիփսիմե Պապիկյանի կողմից ներկայացված «Առատաշեն վայների» ՍՊԸ ընկերության «ARATASHEN WINERY» (No20232918) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ